ՍՍՌՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ՍՈՎԵՏՈՒՄ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ ՀԱՅԵՐԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՁԵՌՆԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով արտասահմանում ապրող հայերի դիմումը հայրենիք՝ Սովետական Հայաստան վերադառնալու համար նրանց թույլտվություն տալու մասին, ինչպես նաև Հայկական ՍՍՌ ղեկավար մարմինների միջնորդությունը, ՍՍՌՄ Ժողովրդական Կոմիսարների Սովետը հատուկ որոշում է ընդունել արտասահմանից հայերի հայրենիք վերադառնալու կապակցությամբ ձեռնարկվող միջոցառումների մասին։

Հայկական ՍՍՌ Ժողովրդական Կոմիսարների Սովետին թույլ է տրվել կազմակերպել արտասահմանյան երկրներում ապրող այն հայերի վերադարձը, որոնք ցանկություն ունեն, ինչպես նաև հանձնարարվել է հայրենիք վերադարձող հայերի համար անհատական բնակարանային շինարարությունը ապահովել պետական վարկով բնակելի տան արժեքի 50 տոկոսի չափով։

Արտասահմանից ՍՍՌՄ վերադարձող հայերը ազատվում են նրանց պատկանող և նոր բնակավայրը փոխադրվող գույքի համար մաքսավճար տալուց։

(«Սովետ. Հայաս.» դեկ. 2, 45 թ.)